# „ՆՏ“ ՆԱՒՐԻՏ

Մ. ՅՈՒԶԲԱՇՅԱՆ

«ՆՏ» նաիրիտը սինթետիկ կաուչուկի՝ նաիրիտի տեսակներից մեկն է։ Այն ստացվել է Երևանի Ս. Մ. Կիրովի անվան գործարանում՝ ըստ նոր, հատկապես մշակված տեխնոլոգիայի։

«ՆՏ» նաիրիտի լուծույթն ունի սոսնձելու լավ հատկություն։ Նա տալիս է ռետինի, կաշվի, թելքավոր նյութերի (կիրզա, տեքստիլ և այլն) սոսնձման բարձր ամրություն։ «ՆՏ» նաիրիտի սոսնձման ամրությունը միջին թվով հավասար է 12 կգ/սմ։

«ՆՏ» նաիրիտը զգալի չափով գերազանցում է կոշիկի արդյունաբերության մեջ կիրառվող արհեստական պերքլորվինիլային սոսնձից։ Ի տարբերություն վերջինի, «ՆՏ» նաիրիտի գործածման դեպքում վերանում է ներքանը ծծմբական թթվով մշակելու շրջանը, որը զգալի տնտեսում է տալիս։ Բացի դրանից, «ՆՏ» նաիրիտը գերազանց կերպով փոխարինում է դեֆիցիտային բնական գուտապերչից ստացվող սոսնձին և նրա արտադրությունը շատ անգամով էժան է նստում (գուտապերչից ստացվող սոսնձի մեկ տոննան արժե 95 հազար ռուբլի, մինչդեռ «ՆՏ» նաիրիտի տոննան արժե ընդամենը 7 հազար ռուբլի)։

Այս հատկությունների շնորհիվ, «ՆՏ» նաիրիտը մեծ կիրառում է գտնում կոշիկի արդյունաբերության մեջ։ «ՆՏ» նաիրիտի արտադրությունը մտցված է 1958 թվականի պլանի մեջ, բայց նրա պահանջը օրեցօր աճում է։

Ներկայումս Մոսկվայի, Լենինգրադի, Ռիգայի, Ռոստովի և Սովետական Միության այլ քաղաքների կոշիկի մի քանի տասնյակ ֆաբրիկաներ աշխատում են «ՆՏ» նաիրիտ նոր սինթետիկ նյութով։

# ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԺՈՂՈՎՈՐԴԻ ԿԱՀՈՒՅՔԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԻՐԵՐ

Ս. ՍԵԿՈՅԱՆ
Ինժեներ

Հաշվի առնելով բնակչության կողմից պահանջվող հարմար, գեղեցիկ և էժան կահույքը, մասնավորապես, մեկ և երկու սենյականոց փոքրիկ բնակարանների համար, Երևանի Ս. Մ. Կիրովի անվան կահույքի ֆաբրիկայում սկսել են արտադրել սեղանատան փոքր գարնիտուրներ, որոնք ֆաներապատված են թեղու և ընկուզենու արժեքավոր տեսակներով։ Գարնիտուրը բաղկացած է սերվանտից, ճաշի և սպասքի ձվաձև սեղաններից, կողասեղանիկից և 6 կամ 12 աթոռներից։

Այդ գարնիտուրի առաջին պարտիաները գրնորդների կողմից լավ գնահատականի են արժանացել, ուստի եկող տարում նման գարնիտուրներ զգալիորեն ավելի շատ կարտադրվեն, քան 1958 թվականին։

Հայաստանի կառավարության և ԺՈՂՈՎՈՐԴԻ որոշումներին համապատասխան, երեխաների համար կահույքի ասորտիմենտն ընդլայնելու նպատակով ԺՈՂՈՎՈՐԴԻ Փայտամշակման և անտառային արդյունաբերության վարչության ֆաբրիկաները 1958 թվականին կարտադրեն 12000 մանկական աթոռ, 4500 սեղան, 800 պահարան և 300 տնային նստարան։

Դրա հետ մեկտեղ, վարչության արտադրական-տեխնիկական բաժինը և կոնստրուկտորական բյուրոն մշակում են մանկական կահույքի նոր տեսակներ, մասնավորապես, մանկական փայտե մահճակալներ՝ ռետինե փոքր անիվներով և փոքր պահարաններ՝ մանկապարտեզների և մանկամատուրների համար։

1958 թվականից կահույքի ֆաբրիկաներում

կազմակերպված է խոհանոցային պահարանների թողարկում։ Նրանք կոմպակտ են, հարմար և մեծ պահանջարկ ունեն, սակայն թողարկվում են դեռևս անբավարար քանակությամբ։

Ա. Մյասնիկյանի անվան կահույքի ֆաբրիկան արտադրում է բազմոց-մահճակալներ։ 1958 թվականի պլանով նա թողարկելու է դրանցից մոտ երկու հարյուր հատ։ Կահույքի այդ կոմբինացված ձևը շատ հարմար է նրանով, որ հնարավորություն է տալիս խնայողաբար օգտագործել բնակելի տարածությունը։ Այն ֆաներապատվում է թեղու և ընկուզենու արժեքավոր տեսակներով։ 1959 թվականին կահույքի այդ ձևի արտադրությունը ծրագրվում է հասցնել մինչև 500 հատի։

Նոր տիպի բնակարանների համար նախատեսվող կահույքը պետք է լինի փոքր չափի և հարմար՝ կիրառման համար։ Այդ պահանջներին առավել չափով բավարարում են միօրինակացրած հանգույցների և դետալների սեկցիոն կորպուսային կահույքի հավաքածուները։ Փոքր գաբարիտներ ունեցող սահմանափակ թվով (4—5) սեկցիաներից բաղկացած կահույքը թույլ է տալիս հարմար և կոմպակտ ձևով կահավորելու բնակարանը։

---



Նկ. 1. Խոհանոցային պահարան։



Նկ. 2. Սերվանտ։



Նկ. 3. Փոքր գաբարիտային գարնիտուրի աթոռ։



Նկ. 4. Կողասեղանիկ հեռուստատեսի համար։



Նկ. 5. Ճաշի սեղան։



Նկ. 6. Բազմոց-մահճակալ՝ բացված ձևով։

Նկ. 7. Բազմոց-մահճակալ՝ հավաքված ձևով։